Ա. Հ. ՂԱԶԱՐՈՍՅԱՆ

# ԳԼԱՁՈՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԸՆԴՕՐԻՆԱԿՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐ

Միջնադարյան Հայաստանում գրչության կենտրոն էր ամեն մի դպրոց, վարդապետարան և համալսարան: Ուսուցման դասագրքերը ձեռագրերն էին: Աստվածաշնչի հետ մեկտեղ օգտագործվում էին ուսուցվող առարկաների վերաբերյալ երկեր, մասնավորապես ժողովածուներ կամ առանձին հեղինակների մատենագրություններ: Դրանց ընդօրինակությունները աշակերտները կատարում էին նախ իրենք սովորելու համար, իսկ երբ գրիչներ էին դառնում, մասնագիտանում այդ արվեստի մեջ, պատվերներ էին ստանում ուրիշներից թե՛ այն դպրոցներում, որտեղ սովորում էին, և թե՛ վանքերում ու եկեղեցիներում, ուր ծառայության էին անցնում: Այդ պատճառով գրչության կենտրոն էր ամեն մի վանք ու եկեղեցի, որոնց հոգևորականների կբաղմունքի մի բնագավառն էլ այդ է եղել[1]:

Գլաձորի համալսարանի րաբունապետերը հայոց վարդապետարանների ծրագիրը հարստացնելու համար անհրաժեշտ ձեռագրերի ընդօրինակությունները հանձնարարում էին ոչ միայն իրենց սաներին, տեղի մասնագիտացած գրիչներին, այլև տարբեր վայրերում աշխատող հմուտ գրիչներին: Նոր ստացված ձեռագրերը ստուգվում էին, սրբագրվում: Դրանց հսկողությունը, սկսած Ս. Առաքելոց վանքում ուսանելու տարիներից, դրված էր Եսայի Նչեցու վրա, մինչև նրա րաբունապետություն ստանալը հայոց առաջին համալսարանում:

Ձեռագրերը բազմացնելու նպատակով վերստին ընդօրինակել էին տալիս դրանք նոր ընդունված սաներին, կրկին սրբագրում և հանձնում էին օգտագործման:

Գլաձորի սաների և առանձին գրիչների կողմից ընդօրինակվել են հազարավոր ձեռագրեր, սակայն այնտեղից մեզ շատ քիչ ձեռագրեր են հասել, և դրանցից ոչ բոլորն են, որ ունեն հիշատակարաններ, ուր նշված են ընդօրինակման տեղն ու ժամանակը:

Օգտվելով ձեռագրերից և նրանց հրատարակված հիշատակարաններից ու Գլաձորի համալսարանի մասին գրված ուսումնասիրություններից, մենք ճշգրտել ենք որոշ ձեռագրերի պատկանելությունը և կազմել Գլաձորի համալսարանից մեզ հասած ձեռագրերի ցանկը[2]:

Քանի որ Գլաձորի համալսարանի նախապատրաստությունը Ներսես Մշեցին սկսել էր դեռևս Մշո Ս. Առաքելոց վանքում, ուստի մենք ներկայացնում ենք նաև նրա համար ընդօրինակված ձեռագրերը:

---

[1] Հ. Ոսկյան, Վանի Վասպուրականի վանքերը, Վիեննա, 1947 թ., էջ 1057:

[2] Մեր ուսումնասիրությունը տպագրվել է ՀՍՍՀ ԳԱ Հաս. գիտ. «Լրաբեր» ամսագրում, 1984 թ. № 3, էջ 58—66: Այստեղ ներկայացնում ենք միայն ցանկը:

«Ձեռագրի հասցեն» սյունակում բերված են հավաքածուների անունն ու ձեռագրի համարը: Գրականությունից օգտվելու դեպքում աղբյուրները համառոտագրել ենք ըստ նշված կարգի:

1. Ալիշան, Սիսական — Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893 թ.
2. Ալիշան, Սիսուան — Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885 թ.
3. Կյուլեսերյան, Ցուցակ Անկիւրիոյ — Բ. Կյուլեսերյան, Ցուցակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վանուց և շրջակայից, Անթիլիաս, 1957 թ.
4. Հովսեփյան, Խաղբակեանք... — Գ. Հովսեփյան, Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969 թ.
5. Մուրադյան, Ցուցակ Մշո Առաքելոց վանքի — Ս. Մուրադյան, Ն. Մարտիրոսյան, Ցուցակ ձեռագրաց Մշո Ս. Առաքելոց վանքի և շրջակայից, Երուսաղեմ, 1967 թ.
6. Կոնիբեր, Ցուցակ Բրիտանական թանգարանի — Ֆ. Կոնիբեր, Ցուցակ հայերեն ձեռագրաց Բրիտանական թանգարանի, Լոնդոն, 1913 թ.
7. Լալայան, Ցուցակ Վասպուրականի—Ե. Լալայան, Ցուցակ Վասպուրականի հայերէն ձեռագրաց, Թիֆլիս, 1915 թ.
8. Արձագանք 1888 թ. — Արձագանք, Թիֆլիս, 1888 թ. 10.
9. Բազմավէպ 1947 թ. 9—10 — Բազմավէպ, Վենետիկ, 1947 թ. 9—10.

## ՆԵՐՍԵՍ ՄՇԵՑՈՒ ՀԱՄԱՐ ԸՆԴՕՐԻՆԱԿՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐ

| № բովանդակությունը | թվա-կանը | գրչության վայրը | գրիչը | ստացողը | ձեռագրի հացեն |
|---|---|---|---|---|---|
| 1. Մեկնութիւն Հնգեմատենի Վարդանայ | մինչեվ 1270 | Խոր Վիրապ | Հովհաննես | Ներսես վարդապետ | Մատենադարան № 1094 |
| 2. Փիլոնի Լուծմունք Հնգեմատենից | 1275 | Եղիավարու վանք | Գրիգոր Բարսեղ | Ներսես վարդապետ | Մատենադարան № 3932 |
| 3. Ճառք սրբոյն Բարսեղի | 1279 | Եղիավարու վանք | Ստեփանոս | Ներսես րաբունի | Մատենադարան № 5595 |
| 4. Ճառք սրբոյն Բարսեղի | 1279 | Եղիավարու վանք | Եսայի գրիչ, սրբագրող | Ներսես րաբունի | Մատենադարան № 5595 |
| 5. Եղնիկ Կողբացի, Եղծ Աղանդոց | 1280 | [Եղիավարու վանք] | Լուսեր | Ներսես հռետոր | Մատենադարան № 1097 |
| 6. Մեկնութիւն Եսայեայ Դաւթի Քոբայրեցւոյ | 1281 | Գուգարք, Մշկավանք | Եսայի գրիչ, սրբագրող Բարսեղ | Ներսես րաբունի | Մատենադարան № 1758 |

## ԳԼԱՁՈՐՈՒՄ ԸՆԴՕՐԻՆԱԿՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐ

| № բովանդակությունը | թվա-կանը | գրչության վայրը | գրիչը | ստացողը | ձեռագրի հացեն |
|---|---|---|---|---|---|
| 1. Մատենագրութիւնք Դիոնիսոսի Արիսպագացւոյ | 1282 | [Աղբերց վանք] | Ստեփանոս Եսայի սրբագրող | Ներսես հռետոր | Մատենադարան № 49 |
| 2. Հաւաքածոյ | 1283—12 ²4 | Վայոց ձոր, Աղբերց վանք | Մաթևոս Կիլիկեցի, Եսայի Մոմիկ, Սարգիս | Ներսես րաբունի | Վիեննա № 571 |
| 3. Խրատ Եւագրեայ | 1284 | [Աղբերց վանք] | Սարգիս | Եսայի վարդապետ | Մատենադարան № 437 |
| 4. Ժողովածու | 12ˇ3—1284 | [Աղբերց վանք] | Եսայի, Սարգիս, Սիմեոն | Եսայի վարդապետ | Մատենադարան № 437 |
| 5. Ժողովածու | 1284 | [Աղբերց վանք] | Եսայի | Գրիգոր արքեպիսկոպոս | Մատենադարան № 1422 |
| 6. Մեկնութիւն կաթողիկէից թղթոց | 1291 | Գլաձոր | Հովհաննես | Եսայի | Վենետիկ № 656 |
| 7. Նարեկ | 1291 | [Գլաձոր] | Մատթեոս | Տիրատուր | Կյուլեսերյան, Ցուցակ Անկիւրիոյ, էջ 659 |
| 8. Մեկնութիւն գործոց առաքելոց | 1292 | [Գլաձոր] | Հովասափ | Եսայի | Մատենադարան № 1363 |
| 9. Մեկնութիւն Եսայեայ մարգարէի | 1292 | [Գլաձոր] | Սիմեոն | | Ալիշան, Սիսուան, էջ 103 |
| 10. Ժողովածու | 1292 | Գլաձոր | Վարդան Կիլիկեցի | Եսայի վարդապետ | Մատենադարան № 470 |
| 11. Յաղագս երկնային քահանայապետութեանց | 1298 | Գլաձոր | Վարդան Կիլիկեցի | Եսայի | Երուսաղեմ № 1709 |
| 12. Մեկնութիւն ինն երանութեանց Գրիգորի Նիւսացւոյ | 1298 | Գլաձոր | Վարդան Կիլիկեցի | Եսայի | Մատենադարան № 749 |
| 13. Գիրք Պիտոյից | 1298 | Գլաձոր, Ս. Նախավկա | Հովհաննես | Եսայի | Մատենադարան № 6273 |
| 14. Մեկնութիւն կաթողիկէից թղթոց | 1298 | Գլաձոր, Ս. Ստեփանոս | Մկրտիչ | Եսայի | Մատենադարան № 1409 |
| 15. Մեկնութիւն Սաղմոսաց Ներսիսի Լամբրոնացւոյ | սկիզբ 1296 | Գլաձոր | Հովհաննես Երզնկացի, Վարդան Կիլիկեցի | Եսայի | Մատենադարան № 6558 |

| բովանդակությունը | թվա-կանը | գրչության վայրը |
|---|---|---|
| | 1302 | |
| 16. Հաւաքումն մեկնութեան մարգարէութեանըն Եզիկէլի | 1303 | Գլաձոր |
| 17. Մեկնութիւն Դանիէլի Վարդանայ վարդապետի | 1303 | Գլաձոր |
| 18. Աւետարան | 1304 | Գլաձոր, Ս. Ստեփանոս |
| 19. Մեկնութիւնք | 1306 | Գլաձոր |
| 20. Աւետարան | 1307 | Գլաձոր |
| 21. Աւետարան | 1309 | Գլաձոր |
| 22. Ժողովածու Իմաստասիրականք | 1309 | Գլաձոր |
| 23. Քերականութիւն Եսայեայ | 1309 | [Գլաձոր] |
| 24. Մեկնութիւն Սաղմոսաց Ներսիսի Լամբրոնացւոյ | 1312 | Գլաձոր |
| 25. Աւետարան | 1313 | Գլաձոր, Ս. Նախավկա |
| 26. Մեկնութիւն Եզիկիէլի Եսայեայ Նչեցւոյ | 1313 | Ս. Նախավկա |
| 27. Աւետարան | 1314 | Գլաձոր |
| 28. Մեկնութիւն վեցօրեայ արարչութեան | 1314 | Գլաձոր |
| 29. Աստուածաշունչ | 1317 | Գլաձոր |
| 30. Ժողովածու | 1317 | Գլաձոր |
| 31. Ոսկեփորիկ | 1317 | Գլաձոր |
| 32. Աւետարան | 1317 | Գլաձոր |
| 33. Մատենագրութիւնք Գրիգորի Նիւսացւոյ | 1318 | Գլաձոր |
| 34. Ժողովածու Մեկնութեանց | 1318 | Գլաձոր |
| 35. Աստուածաշունչ | 1318 | Գլաձոր |
| 36. Կանոնգիրք | 1318 | Գլաձոր |
| 37. Աւետարան | 1319 | Գլաձոր |
| 38. Մեկնութիւն Դիոնկիսեայ Արիսպագացւոյ Եսայեայ Նչեցւոյ | մինչեվ 1319 | Գլաձոր |
| 39. Գիրք Պիտոյից | 1321 | Գլաձոր, Ս. Ստեփանոս |

| գրիչը | ստացողը | ձեռագրի հասցեն |
|---|---|---|
| Մկրտիչ Թեղենացի | Եսայի | |
| հեղինակ՝ Եսայի Նչեցի | Ստեփանոս մետրոպոլիտ | Մատենադարան № 5566 |
| Մխիթար Սասնեցի | Հովհաննես Արճիշեցի | Մատենադարան № 3606 |
| Ոսկան | Եսայի | Ալիշան, Սիսական, էջ 134 |
| Հովհաննես Երզնկացի | Հովհաննես Երզնկացի | Մատենադարան № 2520 |
| Պողոս | | Բազմավէպ, 1947 թ. № 9—10, էջ 217 |
| Տիրատուր | Եսայի | Մատենադարան № 3393 |
| Տիրատուր | | Մատենադարան № 1751 |
| Գրիգոր արքեպիսկոպոս | Եսայի (հեղինակ) | Մուրադյան, Ցուցակ Մշո Առաքելոց վանքի, էջ 17 |
| Խաչատուր | Դավիթ րաբունի | Մատենադարան № 4679 |
| Պողոս | Եսայի | Մատենադարան № 7842 |
| Առաքել Հաղբատեցի | Ավետիք | Արձագանք, 1888 թ. № 10, էջ 129 |
| Պողոս | Ստեփանոս Տարսայիճ | Մատենադարան № 9150 |
| Բարսեղ Գրիգոր | Եսայի | Մատենադարան № 1657 |
| Տիրացու Կիրակոս | Եսայի Կիրակոս | Մատենադարան № 353 |
| Կարապետ | Եսայի | Մատենադարան № 6897 |
| Սարգիս | Եսայի | Վենետիկ № 265 |
| Ամիր Սարգիս | Եսայի | Մատենադարան № 4456 |
| Հակոբ Թագորացի | Եսայի | Մատենադարան № 418<br>Ալիշան, Սիսական էջ 133 |
| Եփրեմ | Եսայի | Մատենադարան № 1419 |
| Ստեփանոս | Եսայի | Մատենադարան № 206 |
| Հակոբ Թագորացի | Եսայի | Հովսեփյան, Խաղբակեանք... էջ 348—349<br>Վենետիկ № 1917 |
| Եսայի | Եսայի | Մատենադարան № 167 |
| Ներսես | Եսայի | Մուրադյան, Ցուցակ Մշո Առաքելոց վանքի էջ 22—23 |

| բովանդակությունը | թվա-կանը | գրչության վայրը |
| --- | --- | --- |
| 40. Աւետարան | 1321 | Գլաձոր |
| 41. Ճառք Գրիգորի Աստուածաբանի | 1321 | Գլաձոր, Ս. Ստեփանոս |
| 42. Աւետարան | 13[illegible]3 | Գլաձոր |
| 43. Իմաստասիրականք | 1325 | Գլաձոր |
| 44. Թովմա Ագուինացի յաղագս յեօթն խոր-հըրդոյ | 1325 հետո | Գլաձոր |
| 45. Աստուածաշունչ | 1328 | Գլաձոր |
| 46. Աւետարան | 1329 | Գլաձոր |
| 47. Աստուածաշունչ | 1332 | Գլաձոր |
| 48. Ժողովածու իմաստասիրականք | 1334 | Գլաձոր |
| 49. Մեկնութիւն Երգոց երգոյն | 1335 | Գլաձոր |
| 50. Մեկնութիւն երկոտասան մարգարէից Ներսիսի Լամբրոնացւոյ | 1337 | Գայլիձոր |
| 51. Աստուածաշունչ | | |

| գրիչը | ստացողը | ձեռագրի հասցեն |
|---|---|---|
| Կյուրոն | Դավիթ<br>Եսայի | Կոնիբեր, Ցուցակ Բրիտանական թանգարանի էջ 24 |
| Պողոս | Եսայի | Երուսաղեմ № 1414 |
| Ստեփանոս | Եսայի | Մատենադարան № 6289 |
| | Եսայի | Վիեննա № 353 |
| Թորոս Տարոնացի | Սարգիս | Մատենադարան № 560 |
| Դավիթ Գետկեցի | Առաքել Հաղբատեցի | Հովսեփյան, Խաղբակեանք. էջ 350 |
| Թորոս Տարոնացի | Եսայի | Լալայան, Ցուցակ Վասպուրականի, էջ 91 |
| Եփրեմ<br>Դավիթ | Ներսես | Վենետիկ № 12 |
| Հունան | Եսայի | Մատենադարան № 9222 |
| Գրիգոր | Սարգիս | Մատենադարան № 1141 |
| | Աւաքտեր | Մատենադարան № 3606 |
| Եկեկել | Եսայի | Վենետիկ № 9 |